

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼԻՔՅԱՆ ԼԻԼԻԹ ՌԱՖԱՅԵԼԻ

ԴԻԶԱՅՆԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1960-80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ,
դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2014

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

МЕЛИКЯН ЛИЛИТ РАФАЕЛОВНА

ПРЕДПОСЫЛКИ ХУДОЖЕСТВЕННО-ПРИКЛАДНОГО И
ОБЩЕСТВЕННОГО ФОРМИРОВАНИЯ ДИЗАЙНА В
АРМЕНИИ В 1960-80-ЫЕ ГОДЫ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности

17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное
искусство, дизайн”

ЕРЕВАН – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հակոբյան Հրավարդ Հրաչյայի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սերսիսյան Լենա Սուրենի

արվեստագիտության թեկնածու
Հարությունյան Մարտին Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 12-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ասատրյան Ա. Գ.

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель - доктор искусствоведения, профессор
Акопян Гравард Грачевич

Официальные оппоненты - доктор педагогических наук, профессор
Нерсисян Лемс Суменович

кандидат искусствоведения
Арутюнян Мартин Варданович

Ведущая организация - Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Защита диссертации состоится 12-го июня 2014г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.
Автореферат разослан 12-го мая 2014г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор

Асатрян А. Г.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դիզայնը արվեստի ու մշակույթի չափորոշիչներով և գեղեցկության չափանիշներով մարդու գործունեության գլխավոր, առավել զարգացած ու տեսականորեն իմաստավորված ոլորտ է:

Դեռևս այն ժամանակ, երբ մարդու մոտ առաջ եկավ իր կողմից կերտած, ստեղծած առարկայի, գործիքի, աշխատանքի միջոցի, կառույցի հարմարավետության մասին պատկերացումը, դրան, ինչպես նաև ստեղծվող առարկայական աշխարհի ներդաշնակեցմանն ու կատարելագործմանը զուգընթաց, նրա մոտ առաջացավ նաև այդ բոլորի ու միջավայրի գեղագիտական վերակազմակերպման հակումը, այսինքն՝ դիզայներական մոտեցումը:

Ամենաընդհանրական ձևով «դիզայն» հասկացությունը կարելի է ձևակերպել որպես բարձր սպառողական հատկանիշներով և էսթետիկական որակներով ժտովան թրոյունաբերական արտադրանքի, մարդուն շրջապատող առարկայական միջավայրի, արտադրական, կենցաղային և սոցիալ-մշակութային ոլորտի ձևավորման նախագծային, գեղարվեստատեխնիկական գործունեություն, որի բնույթն ու զարգացման մակարդակը կապված են տվյալ դարաշրջանում մարդուն շրջապատող առարկայական միջավայրի գեղագիտական ընկալման տարբեր մոտեցումների, դրա զարգացման վիճակի ու մակարդակի հետ:

Թեմայի արդիականությունը: Ուսումնասիրման ու հետազոտման առարկա է ընտրվել մի բնագավառ, որն իր մեջ ներառում է 1960-80-ական թվականներին Հայաստանում հասարակության գործունեության բարդ միջավայրը նպատակահարմար կազմակերպելու միտումները, մոտեցումներն ու հիմնահարցերը, որոնք դեռևս չէին ուսումնասիրվել, վերլուծվել և համակարգվել:

Դիզայներական ուսումնասիրությունները միշտ էլ արդիական են և գիտական իմաստավորման կարիք ունեն, քանի որ յուրօրինակ կապ հաստատելով հոգևոր ու նյութական մշակույթների միջև, դիզայնը դրանով իսկ ապահովում է տվյալ ժամանակահատվածի քաղաքակրթության մշակութային ամբողջականությունը: Այն զանգվածային, գեղագիտորեն կատարյալ և գործնականորեն հարմար տեսքով արտացոլում է տվյալ հասարակության գիտատեխնիկական մակարդակը, արտադրանքի տեխնոլոգիական արդյունքը: Դիզայնը նախագծողի և նկարչի, արտադրողի և սպառողի համագործակցությունն է, որի արդյունքում գնահատական է տրվում արտադրանքի բնույթին ու կերպին, նրա օգտապաշտական ու գեղագիտական որակներին: Դիզայնը կոչված է միավորելու նաև ազգային մշակույթի հոգևոր ու նյութական, հումանիտար ու գիտատեխնիկական բնագավառներն ու նվաճումները:

Ուսումնասիրության արդիականությունը նաև պայմանավորված է նշված խնդիրների վերհանման ու դրանց ուսումնասիրման անհրաժեշտությամբ: Վերոշարադրյալն ու մի շարք այլ հանգամանքներ էլ հիմք են հանդիսացել ատենախոսության թեմայի ընտրության, այդ բնագավառի ուսումնասիրությունների և հետազոտությունների արդիականության հիմնավորման համար:

Ուսումնասիրության առարկան: Ատենախոսության ուսումնասիրության առարկան Հայաստանում դիզայնի ձևավորման գեղարվեստական, կիրառական և հանրային նախադրյալներն ու 1960-80-ական թվականներին նրա կայացման

ու զարգացման ընթացքն է: Հետազոտության առարկա են հանդիսացել նաև ոլորտի զարգացման պատմական փուլերն ու առանձնահատուկ միտումները:

Մանրակրկիտ ներկայացվել են դիզայնի՝ որպես կիրառական արվեստի տեսակի ու նրա մասին տեսության ծագման և զարգացման գործընթացները: Հատուկ անդրադարձ է կատարվել դիզայնի ձևավորման հիմքերի վրա, որոնք գոյության առաջին իսկ տարիներին, առաջ են քաշվել որպես տվյալ երկրի արտադրության չափանիշներին համապատասխանող գեղարվեստական մոտեցման հիմնական ուղղություններ: Այդ հիմքերը մարդուն շրջապատող միջավայրի, առարկաների, երևույթների, նրա կողմից ստեղծված արտադրանքի ու դրանց հանրային նշանակության և կոնկրետ հարաբերակցությունների դրսևորումներն են, որոնք միշտ էլ արժանացել են յուրօրինակ գեղագիտական գնահատականի:

Միաժամանակ դիզայնն արտացոլում է արտադրանքի, արտադրության միջոցի, տեխնիկայի ու մշակույթի, մասնավորապես արվեստի, փոխադարձ կապը, ինչպես նաև առարկայական միջավայրի գեղագիտական ընկալման հարցերը: Նա սահմանում է մարդուն շրջապատող և մարդու կողմից ստեղծվող առարկայական միջավայրին, արտադրվող արտադրանքին ներկայացվող գեղագիտական պահանջները, որոշում ստեղծվող առարկայական միջավայրի և արտադրանքի գեղագիտական, տեխնիկական ցուցանիշների գնահատման եղանակները, ներդաշնակ առարկայական աշխարհի ձևավորման սկզբունքները և գեղարվեստական նախագծման պահանջներն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության մեջ վերլուծված են հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի մշակութային նվաճումները, որոնք արտացոլում են որոշակի ժամանակահատվածների դիզայնը և այդ հենքի վրա ներկայացվել են Հայաստանում 1960-80-ական թվականներին դիզայնի ձևավորման գեղարվեստակիրառական և հասարակական նախադրյալները:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է նշված ժամանակահատվածներում մշակույթի, արվեստի ու գեղեցկության առավել իմաստավորված ոլորտներից մեկի՝ դիզայնի ձևավորման ու կայացման գործընթացների ուսումնասիրության և Հայաստանում 20-րդ դարի երկրորդ կեսի ու այսօրվա իրական վիճակի հետ համադրման անհրաժեշտությամբ:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրներ: Ատենախոսության հիմնական նպատակն է արվեստաբանական, գիտատեխնիկական տեսանկյունից բազմակողմանի վերլուծության ենթարկել 1960-80-ական թվականների հայկական դիզայնի ձևավորման, կայացման և հանրայնացման ընթացքը: Անդրադարձ է կատարվել հատկապես հայկական դիզայնի 30-ամյա գործունեության արդյունքներին, այդ բնագավառի գիտական, գեղագիտական, հասարակական քննարկումներին, ցուցահանդեսներին, թողարկվող արտադրանքների գեղարվեստական և կիրառական գնահատականներին ու առանձնահատկություններին:

Ատենախոսության մեջ առաջադրվել և արծարծվել են հետևյալ կարևոր խնդիրները.

➤ տվյալ դարաշրջանում դիզայնի, ուրեմն և իրականության գեղագիտական ընկալման տարբեր միջոցների, զարգացման բնույթի, մակարդակի ու վիճակի հետ կապված, տեսական հետազոտությունների

իրականացում և անհրաժեշտ արվեստաբանական հասկացությունների մեկնաբանում,

➤ դիզայնի սոցիալական էության, առաջացման պայմանների, պատմական հիմքերի, արդի վիճակի և զարգացման հեռանկարների ու դրանց վրա ներգործող ստեղծագործական մտածողության, մոտեցման օրինաչափությունների և առանձնահատկությունների ուսումնասիրում,

➤ դիզայնի ծագման ու զարգացման, ինչպես նաև առարկայական աշխարհի միասնականության քայքայման հետ այդ գործընթացների սերտ կապի ուսումնասիրում, նկարագրում, հիմնավորում, համակարգված ներկայացում,

➤ ժողովրդական տնտեսության ճյուղերի մրցունակության վրա դիզայնի նվաճումների անմիջական ազդեցության ու ժամանակակից տեխնիկայի հետ դիզայնի փոխադարձ կապի ուսումնասիրություն և հիմնավորում:

➤ հայկական դիզայնի գեղարվեստական և կիրառական բնույթի ուսումնասիրում և նրա գործառույթների հիմնավորում,

➤ 1960-80-ական թվականների հայկական դիզայնի ձևավորման ու կայացման հանրային, գեղագիտական և տեխնիկական հիմնախնդիրների բացահայտում և ներկայացում,

➤ Հայաստանում 1960-80-ական թվականների դիզայնի հանրայնացման խնդիրների ուսումնասիրում և հիմնական գործընթացների վերլուծություն:

➤ համակարգային վերլուծության միջոցով Հայաստանում 1960-80-ականների դիզայնի հիմնարար սկզբունքների, առանձնահատկությունների, բնույթի ու նշանակության բացահայտում:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ փորձ է արվել ընդգրկել ուսումնասիրության ենթարկել, բացահայտել և ներկայացնել 1960-80-ական թվականների հայրենական դիզայնի հիմնարար սկզբունքները, ձևավորման ու զարգացման գործընթացները և դրանց ժամանակագրությունը: Ըստ այդմ էլ տրվել է հայկական դիզայնի մեկնաբանությունը կիրառական, նյութական արտադրության, մշակութային, արվեստաբանական և հասարակական առումներով:

Անհրաժեշտ է նշել, որ սույն թեման Հայաստանում առ այսօր չի հանդիսացել գիտական համալիր հետազոտության առարկա և խնդրո առարկա հարցի կապակցությամբ վեճերը շարունակվում են նաև մեր օրերում: Այդ առումով ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նրանում, որ առաջին անգամ ուսումնասիրության և քննության առարկա են դարձել հայկական դիզայնի ձևավորման ու զարգացման գեղագիտական և տեխնոլոգիական հիմնարար սկզբունքներն ու հիմնախնդիրները:

Կատարվել է հայկական դիզայնի գեղարվեստական լուծումների մանրամասն համեմատություն համաշխարհային դիզայնի զարգացման հիմնական ուղղությունների ու միտումների հետ:

Մանրամասնորեն ուսումնասիրելով, համակարգելով, վերլուծելով և համադրելով դիզայնի ձևավորման ու զարգացման հիմնարար սկզբունքները, արվեստաբանական տեսանկյունից ներկայացվել է 1960-80-ական թվականների հայկական դիզայնի 30-ամյա գործունեությունը:

Ուսումնասիրվել և համեմատական վերլուծության են ենթարկվել նաև նշված ժամանակահատվածում շրջապատող միջավայրի, արտադրանքի կերպի ու ոճի փոփոխության պատմական միտումները, ամբողջական, ներդաշնակ ձևի

վերափոխումների օրինաչափություններին աշխարհում ընդհանրապես, և Հայաստանում՝ մասնավորապես:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանում արդյունաբերական դիզայնի կայացմանն ու զարգացմանը, հատուկ տեղ է հատկացվել նախագծային գործընթացների ուսումնասիրմանը:

Փորձ է արվել ուսումնասիրել, վերլուծել, արժևորել ու գիտական գնահատական տալ 1960-80-ական թվականների հայկական դիզայնի հիմնախնդիրներին. վեր հանել դրանց լուծմանը նպաստող գործոնները, մշակել ու ներկայացնել այսօր այդ բնագավառի կարգավորմանն ու կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

Հետազոտության արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական, ինչպես նաև գործնական նշանակությունը կայանում է դիզայնի պատմամշակութային ու գեղարվեստական բնույթի բացահայտման և այն, որպես ժամանակակից կիրառական արվեստի ամենագնազվածային ձևերից մեկը, հանրության ուշադրությանը ներկայացնելու խիստ կարևորության ու այժմեականության մեջ: Աշխատության դիզայնի հետ առնչվող վերլուծություններն ու առաջարկությունները կարող են նպաստել Հայաստանի Հանրապետությունում այդ բնագավառի հետագա զարգացմանն ու կատարելագործմանը: Ատենախոսության ուսումնասիրությունների արդյունքներն ու օգտագործված փաստավավերագրական նյութերը, որոնց մի մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ, կարող են գործնական կիրառություն ստանալ և օգտագործվել համապատասխան ուսումնական հաստատությունների դասավանդման գործընթացներում, ինչպես նաև դիզայնի հիմնախնդիրներին վերաբերող առանձին դասընթացներում և գիտական հետազոտություններում: Նրա տեսական, այդ թվում արվեստաբանական և տեխնիկական վերլուծությունները, ինչպես նաև դիզայնի ձևավորման, զարգացման ու կիրառական ասպարեզների ուսումնասիրությունները, կարող են հետաքրքրություն ներկայացնել և որպես լրացուցիչ ուսումնական նյութ ծառայել համապատասխան ծրագրերի համար:

Ատենախոսության մեջ տեղ գտած դիզայնի հետ առնչվող նախագծային և տեխնոլոգիական լուծումների համակարգման և ընդհանրացման դրույթները կիրառելի են ինչպես ուսումնական հաստատությունների համապատասխան ծրագրերում, այնպես էլ դիզայնի կառույցներում՝ որպես նոր նախագծումների համար օգտաշատ նյութեր:

Աշխատության հետազոտությունների արդյունքներն ու պարունակվող դրույթները կարող են նպաստել դիզայնի հիմնարար սկզբունքների բովանդակության ուսումնասիրությանը և դրանց կիրառմանն ու իրացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, քանի որ ներկայացվել են այդ ասպարեզի դինամիկ զարգացման օրինաչափությունները, հաշվի առնելով դրանց կախվածությունը տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքում առկա փոխհարաբերություններից:

Աշխատության տեսական ու մեթոդաբանական բազան և նորմատիվ հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ ատենախոսությունները, գիտական հոդվածներն ու վերլուծությունները, հայրենական և արտասահմանյան հրատարա-

կությունները, ճանաչված մասնագետների հողվածները: Օգտագործվել են թեմային առնչվող գիտաժողովների արդյունքներ, ցուցահանդեսային նյութեր, հաշվետվություններ, հեռուստալրագրային հաղորդումներ, արխիվային նյութեր և այլն:

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում ընկած են արվեստի տվյալ տեսակի պատմահասարակական և գեղարվեստական զարգացմանն առնչվող ընդհանուր գեղագիտական և տեսական-արվեստաբանական մոտեցումներն ու սկզբունքները արտացոլված հայրենական, արտասահմանյան ճանաչված դպրոցների, ուղղությունների և անհատների աշխատություններում:

Հետազոտության ընթացքում, առաջադրված պատմաճանաչողական և կիրառական խնդիրների լուծման նպատակով, հեղինակի կողմից կիրառվել են ամենատարբեր մեթոդներ, այդ թվում՝ դիալեկտիկական, համեմատական, վերլուծական, վիճակագրական և այլն: Աշխատանքում նշված մեթոդների համակցված կիրառումը հնարավորություն է տվել վեր հանել դիզայնի ողջ էության ու զարգացման առանձնահատկությունները: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծություն, պատմական և սոցիոլոգիական) մեթոդները:

Մասնավորապես՝ համեմատական և դիալեկտիկական ընթացման մեթոդներով վերլուծվել են աշխարհում դիզայնի ծագման ու զարգացման պատմական փուլերի և դրանց ու 1960-80-ական թվականներին Հայաստանում դիզայնի ձևավորման գործընթացների միջև առկա ընդհանրությունները, տարբերություններն ու հակասությունները:

Աշխատության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Կերպարվեստի բաժնի նիստում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը ձևավորվել է հաշվի առնելով ուսումնասիրվող թեմայի նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ատենախոսության ուսումնասիրման բնագավառն ու առարկան: Ելնելով առաջադրված նպատակներից, ինչպես նաև դրանցից բխող խնդիրներից, ատենախոսության մեջ ծավալուն և տարողունակ ձևով տրվել է գիտականորեն ճշտորոշված փաստերի հավաստի և համակարգված շարադրանքը, օգտագործված տարաբնույթ սկզբնաձևերը, հետազոտության արդյունքները, եզրակացություններն ու համակողմանի քննության առնված հիմնախնդիրները, որոնք ամփոփ պատկերացում են տալիս դիզայնի՝ որպես գեղարվեստական գործունեության ինքնուրույն ոլորտի մասին:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, հինգ գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից, որը բաղկացած է 192 անվանումից: Աշխատանքը, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկի հետ միասին, շարադրված է 132 էջերում:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի ընտրության և հետազոտության արդիականությունը, ուսումնասիրության առարկան և բնագավառը, ներկայացված են աշխատանքի նպատակներն ու խնդիրները, արդյունքների գիտական, տեսական և գործնական նշանակությունը, թեմայի գիտական հետազոտ-

վածության ու մշակվածության աստիճանը, մեթոդաբանական հիմքը և տեսական բազան, ինչպես նաև աղբյուրագիտական, մեթոդաբանական հիմքերն ու գիտական նորույթը: Նշված համատեքստում ձևակերպվել են հետազոտության պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

ԳԼՈՒԽ 1

Ղիզայնի պատմաժամանակագրական և փաստագրական համառոտ ակնարկ

Գլխում համընդհանուր ձևով ներկայացված է Ղիզայնի ամբողջական պատկերը, պատմական զգալիորեն կարճ ժամանակահատվածում Հայաստանում նրա կազմավորման, կայացման ու զարգացման ողջ ընթացքը: Վեր են հանվել և կատարվել Ղիզայնի զարգացումների բազմակողմանի վերլուծություններ, որոնք հնարավորություն են տալիս տեսնելու նրա արդիական խնդրադրումների ողջ բարդությունն ու հակասությունները:

Անդրադարձ է կատարվել Ղիզայնի վաղեմության հաստատմանը, նրա դրսևորումների ու դերի պատմական կապին, առանձնահատուկ տեղ է հատկացվել նրանց հարաբերակցության հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու բացահայտմանը: Ներկայացվել է ընդամենը մեկ-երկու սերնդաչափ ժամանակահատվածում հաստատված ու կայացած մի նոր մասնագիտական ուղղվածության գործունեություն, ըստ որում աշխատանքում տեղին հարց է բարձրացվել Ղիզայնին ընդհանրապես համապատասխան իմաստավորում տալու և նրա՝ որպես առանձին նոր մասնագիտության, ինքնուրույն գոյության իրավունքը, պահանջը, պատճառներն ու անհրաժեշտությունը հիմնավորելու մասին:

Ներկայացվել է, որ Ղիզայնը, որպես արվեստի ու մշակույթի տեսակ, պետք է ընկալվի պատշաճ մակարդակով, իսկ Ղիզայնեական գործունեությունն ու նրա աշխատանքների արդյունքները՝ որպես հոգևոր և նյութական մշակութային արժեքներ, գնահատվեն ու ճանաչվեն ըստ արժանվույն:

Հեղինակը եզրակացնում է, որ արվեստի ստեղծագործության արժեքների չափանիշներով Ղիզայնի արդյունքը դիտարկելու համար անհրաժեշտ է ձևաոճային վերլուծության արդյունքում արվեստաբանական համակարգում ձևավորել արժեքների շարք, որտեղ այս կամ այն արվեստի ստեղծագործությունները տեղակայված են ըստ աստիճանակարգի, այդ շարքում ներառել Ղիզայնի արտադրանմուշները և ստեղծել նոր, առավել ընդլայնված համակարգ:

Հեղինակի կարծիքով Ղիզայնի՝ որպես գործունեության ոլորտի, նրա բոլոր բաղադրամասերի (ներառյալ Ղիզայնեական մախազման եղանակներն ու միջոցները), գործունեության արդյունքների, այդ գործունեության կազմակերպման ձևերի, ամբողջական վերլուծության բացակայությունն ակնհայտորեն հանգեցնում են նրան, որ այստեղ առկա է բազմաշերտ մի երևույթ, որի վերլուծությունը բավականին բարդ խնդիր է և ունի նոր ուսումնասիրությունների անհրաժեշտություն:

ԳԼՈՒԽ 2

Ղիզայնի տեսաբանական հիմքերը

Հանգամանորեն ներկայացվել և համալիր վերլուծության են ենթարկվել Ղիզայնի պատմության տեսությունների տասից ավելի տարբերակներ: Ըստ որում, այդ հայեցակարգերը համարելով Ղիզայնի բնութագրման ու էության մեկնաբանման կարևոր բաղադրիչներ, հետևելով դիալեկտիկական տրամաբա-

նությանը, ուսումնասիրությունները դիտարկվել են դիզայնի տեսությունների զարգացման ընթացքի մեջ: Դիզայնի պատմությունը, դիզայնի տեսությունը, դիզայնի զարգացման գործընթացն ամենուր դիտարկվում են որպես որոշակի ինքնուրույն զարգացման ուղղվածություն:

Փորձ է արվել բացահայտել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում դիզայնի տեսությունը և ի՞նչ առանձնահատուկ դեր է նա կատարում՝ ստեղծելով իրական դիզայնի հատուկ մակարդակ, որը զարգանում է իր ներքին օրինաչափություններով: Դիզայնի զարգացման արդի մակարդակում հարկ է սկզբում ուսումնասիրել դիզայնի անցած ուղին, գործնական փորձը, իսկ այնուհետև՝ տեսությունը: Կատարելով դիզայնի տեսաբանների ու գործնական ոլորտի մասնագետների տարբեր մոտեցումների ու կարծիքների մամրամասն համեմատական վերլուծություն, արդյունքում հեղինակը չի համարում, որ այսօրվա ամենատարբեր կարծիքները գոյություն ունեցող դիզայնի ամբողջական նկարագրություններն են: Դիզայնի տեսական մակարդակը կարող է դրսևորվել որպես ինքնուրույն երևույթ, բայց միաժամանակ, մասնագիտական մտածողության խնդիրների եղանակների ու փաստարկումների միջոցով այդ տեսական մակարդակն ուղղակի և անմիջական ազդեցություն է ունենում դիզայներական գործնական ընթացքի վրա:

Չեղինակը հիմնավորված ներկայացնում է տարբեր «դիզայնների» տարբեր հեղինակային հայեցակարգեր, որոնք գոյություն ունեն դիզայնի մասնագիտական գաղափարախոսության մակարդակի վրա: Այդ մակարդակը, իհարկե, իրական դիզայնի նկատմամբ գտնվում է որոշակի հարաբերության մեջ: Ներկայացված կարծիքներից յուրաքանչյուրը գոյություն ունեցող կամ անհրաժեշտ դիզայնի մասին լոկ մի առանձին պատկերացում է, և հենց իբրև պատկերացում էլ պետք է դիտարկվի ու գնահատվի դիզայներական գաղափարախոսության մակարդակում:

Չայեցակարգերի բազմաբնույթ լինելն անմիջականորեն կապված է դիզայնի գործընթացի իրական բազմաբնույթ յուրահատկության հետ, որը փաստորեն կարելի է ամփոփել մեկ ընդհանրացման մեջ՝ մասնագիտական նույնանման միջոցների կիրառման ժամանակ դիզայնի անհատական գործունեությունները թաքնվում են, հարմարվում մեկը մյուսին:

Ինչպես ազգային-ժողովրդական մշակույթի ցանկացած դրսևորում, դիզայնի մասնագիտական ազգային գաղափարախոսության ձևավորումը ևս ենթադրում է բարդ ընթացք, քանի որ իրականում շատ հաճախ նկատվում է շեղում տեսականորեն նախանշված ուղիներից:

Ատենախոսության սույն գլխի շրջանակներում, լայն իմաստով, առանձնակի ուշադրություն է հատկացվել «Դիզայն» հասկացության բովանդակության բացահայտմանը:

ԳԼՈՒԽ 3

1960-80-ական թվականների հայկական դիզայնի գեղարվեստական և տեխնիկական բնույթը

Սույն գլխում հետազոտության խնդիրը 1960-80-ական թվականների հայկական դիզայնի ուսումնասիրումն է՝ գործնականում իր ողջ բարդությամբ փորձ է արվել նրա հասարակական գործառույթի վերլուծությունը խորհրդային համակարգում: Բացահայտվել է դիզայնի՝ որպես գեղարվեստաճառագծային գործունեության իրականացման առանձնահատուկ ձևի, կազմակերպական կա-

ռուցվածքը 1960-80-ական թվականներին: Փորձ է արվել որոշարկել դիզայնի՝ որպես գործունեության ոլորտի, հանրագումարային արդյունքը՝ զանգվածային սպառման արտադրանքի սպառողական արժեքը: Քանի որ խորհրդային հասարակարգի պայմաններում սպառողական արժեքը ձևավորվում էր որպես լրացուցիչ ապրանքային արժեք, դիզայնը՝ որպես բաղադրիչ, սերտորեն կապված էր տնտեսության այդ համակարգի հետ: Աշխատանքում հանգամանորեն լուսաբանվել է սպառողական արժեքի դրսևորման բազմազանությունը և խորհրդային Հայաստանի մշակույթի տվյալ համակարգում, այդ բնագավառում ներառելով դիզայնի արտադրանքն իր գործառնության մեջ: Ուսումնասիրվել է դիզայնի հեղինակային տեսությունների ձևավորումը և դրանց դերը դիզայնե-րական արհեստավարժ գաղափարաբանության կայացման գործում, այդ գաղափարաբանության տարանջատումն ըստ դիզայնի իրական շերտավորման: Այս երևույթներին գնահատական է տրվել, հաշվի առնելով դիզայնի արդյունքի զեղազիտական մշանակության կարևորումը նրա կիրառական մշանակությունների համատեքստում:

Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրելով հայկական դիզայնի բնույթը և 1960-80-ական թվականներին երկրում զեղարվեստանախագծային համաման գործունեության զարգացման ընթացքը, հեղինակը փորձել է առավելագույն հակիրճ բնութագրել հայկական դիզայնի մասին հանրագումարային պատկերացումները, որոնք ներառված են զեղարվեստանախագծային տվյալ գործունեության մեջ և հանգել է հետևյալ եզրակացության, որ՝

1. Հայկական դիզայնն ավելի քան երեք տասնամյակ կենսունակ զարգացում է ապրել և ստեղծել արդյունաբերական արտադրության որակի դասական նմուշորինակներ: Հետևապես, հայկական դիզայնի կողմից մշակված արհեստավարժ եղանակների ու միջոցների իրացումը հայրենի զեղարվեստական նախագծման համար առաջնահերթ խնդիր է եղել:

2. Հայկական դիզայնը զարգացել է խիստ կանոնակարգված տնտեսական հարաբերությունների զարգացման տվյալ փուլի հատուկ պայմաններում: Հայրենական և արտասահմանյան արտադրության նպատակները բավականաչափ տարբեր էին, հետևապես նաև Հայաստանում զեղարվեստական նախագծման սկզբունքները պետք է, որ տարբերվեին արևմտյան դիզայնի սկզբունքներից:

Դիզայներական զեղարվեստա-նախագծային գործունեության և դիզայնի՝ որպես սպառողական արժեքների ստեղծման համակարգի միջև փոխադարձ կապերի բարդ ամբողջության խորացված ուսումնասիրությունը հստակորեն վկայում է տվյալ ժամանակահատվածում Հայաստանում զեղարվեստական նախագծման անհրաժեշտ համակարգի մասին պատկերացումների անընդհատ համալրման միտումը:

Ներկայացնելով Հայաստանում եղած զեղարվեստական նախագծման համակարգի յուրահատուկ բնույթը, աշխատության հեղինակը միաժամանակ հաշվի է առել այն հանգամանքը, որ դիզայնի սպասարկման որոշակի բնութագրեր, որոշակի ժամանակահատվածում, իրենց համանմանությունն են ունեցել ողջ խորհրդային երկրում: Ըստ որում, նրանց սպառողական արժեքի բազմազան մշանակությունների մեջ առաջին հարթություն էին մղվել մշակութային-ստեղծելատվական, զեղազիտական իմաստները: Հայկական

դիզայնի էական տարբերությունը երկրի գեղարվեստական նախագծման կազմակերպման ցանկացած այլ համակարգից կայանում էր նրանում, որ այն ընդլայնվում էր արտադրության շահերին ու հետաքրքրություններին համապատասխան: Հետևաբար, միջոցների ընտրությունը կախված էր ըստ ստեղծագործական ուղղվածության գեղարվեստական նախագծման անհրաժեշտ համակարգերի որոշարկումից:

Պիզայնի արտադրանքն իր որոշակիացման մեջ ձեռք էր բերում բազմանշանակություն, ըստ որում, գեղագիտական նշանակությունն արդեն կազմում էր ընդհանուր մշակութային-տեղեկատվական նշանակության մի տարր:

Հեղինակի կողմից խորհրդահայ դիզայնի փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գեղարվեստանախագծային գործունեությունն իրականացվում էր ըստ սպառողի տեսակի, սակայն մի դեպքում տվյալ տեսակի ընթացիկ նախագծման բնութագրերը որոշարկվում էին վիճակագրական հետազոտությունների միջոցով, մյուս դեպքում՝ հատուկ գեղարվեստանախագծային հնարքների միջոցով:

1960-80-ական թվականների հայկական դիզայնի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում տեսնել, որ նրա տեսաբանական աստիճանը, տիրապետելով նշանակալի ինքնավարության, որոշակի չափով ազդել է նաև ողջ երկրի դիզայների գաղափարաբանության ձևավորման վրա:

ԳԼՈՒԽ 4

1960-80-ական թվականների հայկական դիզայնի կիրառական բնույթը

Գլխում, որը բաղկացած է 9 ենթավերնագրերից, հեղինակն առանձնակի հետաքրքրությամբ ներկայացնում է 1960-80-ական թվականների հայկական դիզայնի կիրառական բնույթի զարգացման ընթացքը:

Վերլուծության ենթարկելով ուսումնասիրման առարկայի շրջանակներում դիզայնի կիրառական բնույթը, հեղինակն այն բաժանում է երեք հիմնական փուլերի:

Առաջին փուլում՝ 1960-ական թվականներին, առաջ քաշվեցին գեղարվեստական նախագծման հիմնական ուղղությունները, որոնք համապատասխանում էին Հանրապետության արտադրության յուրահատկություններին: Այդ տարիներին հաստատվել են փոխադարձ կապեր նախագծային տարբեր կազմակերպությունների ու Հանրապետության խոշորագույն ձեռնարկությունների միջև, իրականացվել են մասնագետների պատրաստման և գործունեության բարելավման ուղղությամբ բեղմնավոր աշխատանքներ: Երկրորդ փուլը (1965-1967թթ.) բնութագրվում է աշխատանքի ծավալների ավելացմամբ, ինչը հետևանք էր Հանրապետությունում տեխնիկական գեղագիտության արդեն բարձր պահանջների: Հեղինակը համոզմունք է հայտնում, որ դրա հետևանքով էր, որ 1967 թվականին Հայաստանում հիմնվեց Տեխնիկական էսթետիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղը (ՏԷՀԳՀԻ-ի ՀՍ):

Իր գործունեության երրորդ փուլում (1967-1973թթ.) հայ դիզայներական միտքը հիմնականում իրականացնում էր մեքենաշինական իրերի գեղարվեստական նախագծումներ, մշակվում էին հանրային և արտադրական ինտերիերի նախագծեր, կատարվում աշխատանքներ՝ արդյունաբերական գրաֆիկայի ոլորտում:

Այս առումով առաջնային նշանակություն էին ձեռք բերում տեխնիկական գեղագիտության սկզբունքների կիրառումը և նախագծման ու արտադրության գործընթացի ժամանակ գեղարվեստական նախագծման ձևատեսությունները:

Ժամանակի ընթացքում առաջին պլան եկան հետազոտություններ՝ նվիրված ժողովագործման իրերի տեսականու և դրանց սպառողական պահանջների գիտական կանխատեսման խնդիրներին: Այս հետազոտություններն իրենց մեջ ներառում էին ընդհանուր տեսական և ձևատեսական հարցերի ուսումնասիրություն, իրերի հեռանկարային տեսակների նախագծում՝ ավանդական եղանակների և ձևատեսությունների միջոցով, ինչպես նաև նախագծային հիմնավորում:

Դիզայներների համագործակցությունը ճարտարապետների հետ հնարավորություն էր տալիս լուծելու տարածքի և սարքավորման առավել արդիական օգտագործման խնդիրները, հարմարավետ պայմանների ստեղծումը, այս կամ այն առարկայի նպատակահարմարության բացահայտումը: Հանրային և արտադրողական խնդիրների կազմակերպման համար անհրաժեշտ էր խնդիրների համալիր լուծում:

Արդյունաբերական կամ հասարակական շինությունների արտաքին տեսքի նախագծման ժամանակ հիմնական ուշադրությունը դարձվում էր նրա ճիշտ կառուցման վրա: Բարենպաստության խնդիրը դրվում էր արդյունաբերական շենքերի հարմարավետ և ապահով կազմակերպման հիմքում: Առաջնահերթ տեղ էր հատկացվում ձեռնարկության ժամանակակից ճարտարապետական տեսքի, սանիտարական-հիգիենիկ գոտիների և համազստի տեղերի ճիշտ նախագծմանը, լրացուցիչ տարածքների տեղադրմանը, կանաչապատմանը և տարածքների լուսավորմանը:

Հայկական դիզայնում գիտական հիմնավորված նախագծումների ողջ բազմազանությունը, աշխատանքի ներքին և արտաքին գործոնների, ինչպես նաև մարդու հոգեֆիզիոլոգիական յուրահատկությունների հաշվի առնելը, համարվում էր կարևոր օղակ աշխատանքի գիտական կազմակերպման, արտադրողականության բարձրացման գործում:

Այս կարևոր գործոններն արտադրական ոլորտին առաջադրում էին խնդիրներ՝ կապված ճարտարագետների, նկարիչ-նախագծողների, հոգեբանների, կենսաբանների, բժիշկների ներուժի միավորման հետ, որը շատ անգամ պայմանավորվում էր նոր, բարձր արտադրողական և առողջության համար անվնաս տեխնիկայի ստեղծմամբ:

Դիզայներական մոտեցումը դառնում էր բազմիմաստ նոր ճյուղ և գոյություն ուներ տարբեր մասնագետների խումբ, ովքեր համապատասխանաբար մասնակցում էին գեղարվեստական նախագծման գործընթացներին:

Գեղարվեստա-տեխնիկական պահանջները նախատեսում էին իրերի ներդաշնակ միասնությունը և գեղեցկությունը: Թողարկվող իրերը պետք է բնորոշվեին արդյունավետությամբ և գեղագիտական նշանակության հորինվածքային միասնության արդիականությամբ և արտաքին ձևավորման գեղարվեստականությամբ: Գեղարվեստական նախագծման առարկաները կիրառական նշանակության իրերն էին, ստեղծվող առարկայական միջավայրը, որը շրջապատում է մարդուն և ստեղծվում է մարդու կողմից:

Ընդհանրապես, մարդու կողմից ստեղծված իրը կրում է իր վրա դարաշրջանի կնիքը, քանի որ նրանում արտացոլված են տվյալ ժամանակահատվածում և՛ գիտատեխնիկական, և՛ հասարակական հարաբերությունները, և՛ գեղեցիկի մասին պատկերացումը:

Հիմնական դիզայներական աշխատանքներն իրականացնում էին արտադրող ձեռնարկությունները, որոնց խնդիրն էր ներկայացնել իրենց արտադրանքը: Ձեռնարկություններին զգալի ձևատեսական և կազմակերպչական օգուտ կարող էին ցուցաբերել Ճյուղային գիտահետազոտական ինստիտուտները և հատուկ նախագծային ստորաբաժանումները, որոնք պատասխանատու էին դիզայնի լայն կիրառման ապահովման համար, սակայն նրանց կարծիքներն ու առաջարկությունները հաճախ անտեսվում էին:

Անցյալ դարի 80-ական թվականներին գեղագիտությունը Հայաստանում ստանում էր առավել լայն տարածում: Այն արդեն կարիք չուներ քարոզչության և, առավել և՛ «գովազդի», քանի որ մարդու ամենօրյա առնչությունը բազմաթիվ իրերի հետ, թույլ էր տալիս նրան գնահատել լավը, հարմարավետը, գեղեցիկը՝ ակամա դառնալով նրա քարոզիչը:

ԳԼՈՒԽ 5

Դիզայնի հանրայնացման խնդիրները Հայաստանում 1960-80-ական թվականներին

Շարունակելով ատենախոսության նախորդ գլուխներում ներկայացված վերլուծությունները, հեղինակը հանգամանորեն ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանում դիզայնի հանրայնացման ընթացքը: Նկատվում էր դիզայնի հանրայնացման գործընթացների զգալի ակտիվացում:

Յուրաքանչյուր տարի անց էր կացվում «Նկարիչ նախագծողի օրը» միջոցառումը, որը կազմակերպվում էր հանրապետության Տեխնիկայի տանը: Այդ և նմանատիպ միջոցառումների կազմակերպման գործում մասնակցություն էին ցուցաբերում հանրապետության առաջատար ձեռնարկությունները, գեղարվեստա-նախագծային կազմակերպությունները, նկարիչ-նախագծողները: Դիզայնի ոլորտների մասին քննարկվող հարցերը վերաբերվում էին Հանրապետության ձեռնարկություններում դիզայներական ծառայությունների կազմակերպչական կառուցվածքին, նրանց դերին սպառողական, գեղագիտական և զանգվածային պահանջարկի խնդիրներում: Քննարկման առարկա էր դառնում նաև Հանրապետության ձեռնարկություններում թողարկվող հանրային օգտագործման իրերի սպառման և զանգվածային պահանջարկին ու այդ լուսյի ներքո, դիզայներական մոտեցումներին վերաբերվող հիմնահարցերը:

Կազմակերպվել են ամենատարբեր բնույթի քննարկումներ, որոնց մասնակցություն են ունեցել Հանրապետության ձեռնարկությունների ղեկավարներ, գիտնականներ, նախագծողներ, դիզայներներ, որոնք շեշտել են, որ անհրաժեշտ է ավելի լուրջ ուշադրություն դարձնել մարդ-մեքենա համակարգում էրգոնոմիկական գործոնին, ինչը թույլ կտա սպառողական առաջընթաց ապահովել նախագծվող նոր իրերի արտադրության բնագավառում:

Նշված միջոցառումների շարքում հեղինակը նպատակահարմար է գտել նշել 1978-84 թթ. ընթացքում «Ձևանիտ» միության հետ միասին, ՏԵՀԳՀԻ ՀՄ-ի մասնագետների կողմից, Երևանի և Հանրապետության ձեռնարկություններում կազմակերպված տեխնիկական գեղագիտության, գեղարվեստական

նախագծման և էրզոնոմիկայի գծով դասախոսությունների ողջ համակարգերը, որոնք զուգորդվել են նաև տեսական օժանդակ նյութերի ցուցադրությամբ:

1983-ից սկսած հայկական հեռուստատեսությամբ կազմակերպվել է «Գեղագիտությունը կենցաղում», «Ժամանակակից խոհանոցի սարքավորումները», «Ժամանակակից խոհանոցի ձևավորումը» և նման դասախոսությունների ու բազմաշերտ հաղորդումների շարք:

1984-ի հոկտեմբերին Մոսկվայում, Տեխնիկական գեղագիտության տանը, բացվել է «Հայաստանի դիզայն» ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվել են հայ դիզայներների լավագույն աշխատանքները՝ ստեղծված վերջին 25 տարիների ընթացքում: Այնտեղ ներկայացվել են հայ դիզայներների ստեղծագործական ձեռքբերումները, նրանց նպատակների և առաջարկվող որոնումների ուղիվածությունը: Ցուցադրությանը ներկայացված նմուշները հավաստում էին հայ դիզայներների ներդրումն արտադրության արդյունավետության և արդյունաբերական արտադրանքի որակի բարձրացմանն ուղղված խնդիրների լուծման հարցում, ինչպես նաև նրանց գործունեության ընդգրկունության մասին:

Հենվելով դիզայնի զարգացման ու հանրայնացման ընթացքի ուսումնասիրման արդյունքների և իրավիճակի վրա՝ հեղինակը հանգել է այն հետևություններին, որ 1960-80-ական թվականներին Հայաստանում առկա էին բազմաթիվ դիզայներական դիրքորոշումներ, որոնք այն հիմքն էին, որի վրա կարող էր զարգանալ հայկական դիզայնը՝ իրեն բնորոշ գծերով և իր ոճով: Առանձնակի ուշադրություն էր դարձվում դիզայնի զարգացման համատեքստին, նրա հեռանկարներին:

Կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնցից աշխատության հեղինակը նպատակահարմար է գտել նշել 1980-ի հոկտեմբերի 24-ին անցկացված հերթական խորհրդաժողով-ցուցահանդեսը, ույն թվականին ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում կազմակերպված «Հայաստանի գեղարվեստական նախագծում» թեմայով միջոցառումը: 1979-ին կազմակերպվել է գիտա-գործնական գիտաժողով՝ «Տեխնիկական գեղագիտության դերը արտադրանքի որակի բարձրացման հարցում» թեմայով:

1978-ին անցկացված «Որակի բարձրացման համար» գիտաժողովը, որից հետո ավանդույթ դարձավ նման միջոցառումների կազմակերպումը նաև կլոր սեղանի շուրջ, դիզայներների և ձեռնարկությունների ներկայացուցիչների քննարկումներով:

Աշխատության հեղինակը նշված ժամանակահատվածում դիզայնի ներդրման ու զարգացման մասին հետաքրքիր լուսաբանումներ է նշում Համամիութենական և Հանրապետության մամուլում:

Ներկայացնելով Հայաստանի դիզայնի իմաստը, շատ անգամ հատուկ ներկայացվել է Հայաստանը՝ որպես հին մշակույթի կրող, որպես բազմաթիվ դիզայներական դիրքորոշումների արտացոլման աշխարհագրական վայր:

Խորհրդային Հայաստանի դիզայնի ներկայացումը, որն աչքի էր ընկնում հիմնախնդիրների ինքնատիպ լուծումներով, ցուցանիշների բարձր մակարդակով, իրավունք էր ստացել իր արտադրանքն առաքելու ավելի քան 70 երկիր: Անուրանալի էր նաև Հանրապետությունում ստեղծագործող ավելի քան 200 դիզայներների ավանդը գեղարվեստական ձևավորման բնագավառում: 1960-80-ական թվականների իրենց աշխատանքներում հայ մասնագետներն

ազգային լավագույն ավանդույթները վարպետորեն զուգորդում էին դիզայնի արդիական միտումների հետ:

Ներկայացնելով Հայաստանում 1960-80-ական թվականներին դիզայնի զեղարվեստակիրառական զարգացումները, հետազոտության հեղինակը նշում է, որ այդ բնագավառի կադրերը մեծամասամբ պատրաստվում էին Երևանի զեղարվեստա-թատերական ինստիտուտում: Այդ մասնագետների թերություններն էին ինժեներական պատրաստվածության ցածր մակարդակը, օտար լեզուների վատ իմացությունը, գիտական աշխատանք կատարելու, ինչպես նաև գիտական համակարգից օգտվելու դժվարությունները: Տարիների ընթացքում չէր հաջողվում առանձին խումբ կազմել փորձառու մասնագետներից: Այդ մասնագետները չէին համապատասխանում Հայաստանի դիզայնի զարգացման պայմաններին: Դիզայներների մեծ մասը չէր աշխատում ըստ մասնագիտության և կատարում էր տարբեր դեկորատիվ, ձևավորման աշխատանքներ: Այդտեղից էլ հիմնական թերությունները՝ կադրերի արտահոսք և ոչ բարձր մակարդակի աշխատողներ:

ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

➤ Հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի մշակութային նվաճումները, որոնք ներկայացնում են մեր ժողովրդի պատմական ճակատագիրը՝ ծագումը, անցած ճանապարհը, պայքարն ու ձեռքբերումները, արտացոլում են նաև տվյալ ժամանակահատվածի դիզայնը, վկայում են պատմական շատ մնալուց արժեքների, այդ թվում՝ քաղաքաշինության, ճարտարապետության, եկեղեցաշինության, ճարտարագիտական մտքի, քանդակագործության, որմնակարչության, տարագի, մատենագիտության, մանրանկարչության, գրաֆիկայի, գեղանկարչության և շատ այլ ասպարեզների մակարդակի մասին: Այդպիսի բարձր մակարդակի համար պետք է լիներ համապատասխան միջավայր ու շրջապատ ինչպես սեփական երկրում, այնպես էլ որոշակի քաղաքական, առևտրատնտեսական կապերով կապված երկրներում: Եվ պետք է հաշվի առնել, որ զեղարվեստի ու ստեղծագործության վերոնշյալ ուղղություններն ու դիզայնը, ինչպես նաև նրանց տարրերը, չէին կարող ձևավորվել ու զարգանալ զեղագիտական տվյալ համակարգերից դուրս: Դիզայնը, լինելով ազգային մշակույթի կարևորագույն բնագավառներից մեկը, միշտ էլ կապված է եղել տվյալ դարաշրջանի զեղագիտական մտքի զարգացման հետ: Այս առումով հայկական մշակութային ու զեղագիտական ողջ համակարգում, ինչպես նաև դիզայնում, շատ մեծ են եղել հաջողությունները, և արդեն այս ասպարեզում ճանաչված խնդիրների հետ չափադրվել է ողջ զեղագիտական ու զեղարվեստական միտքը:

➤ 18-րդ դարի սկզբներին Եվրոպայում իրական հիմքեր ստեղծվեցին արդյունաբերական հեղաշրջման համար: Արհեստագործական և մանուֆակտուրային արտադրությունից մեքենայականին անցնելը պայմանավորվեց աշխատանքի միջոցների փոփոխմամբ, որոնք սկսվեցին գործվածքային արդյունաբերությունից: Առաջացավ գործվածքի հսկայական պահանջարկ, և մեկը մյուսի հետևից այս բնագավառում ձեռքի աշխատանքը զանգվածաբար փոխարինվեց մեքենայականով: 18-րդ դարի առաջին կեսին Եվրոպական առաջավոր երկրներում արդեն հազարավոր մեքենաներ էին աշխատում: Սկզբնական շրջանում քանի որ դրանք պարզ անարվեստ մեքենաներ էին, նրանց կառուցվածքն ու ձևը (ինչպես արտաքին, այնպես էլ արտադրական) իրականացվում էր հենց իրենց՝ արհեստավորների կողմից: Ավելի լավ իմանալով բուն արտադրական

գործընթացները, նրանք ստեղծեցին մեքենան ու այն ծառայեցրին որպես աշխատանքի միջոց, նրանով փոխարինելով մարդու ձեռքի աշխատանքը:

➤ 1960-ական թվականներին հորհրդային Միությունում ձևավորվեց գեղարվեստական նախագծման կազմակերպման պետական համակարգ: Դիզայներական գործունեությամբ սկսեցին զբաղվել դրա համար նախատեսված հատուկ կոնստրուկտորական բյուրոներ ունեցող կազմակերպությունները: Այդ նպատակով ստեղծվեցին Տեխնիկական գեղագիտության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը և նրա մասնաճյուղերը: 1963թ. երևանում հիմնվեց նրա մասնաճյուղը:

➤ Հայաստանում հայրենական արդյունաբերության զարգացմանը զուգընթաց, 1960-ական թվականների սկզբից, երբ երևանում բացվեց Տեխնիկական գեղագիտության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղը, արդյունաբերության մեջ գեղարվեստի նախագծման եղանակների կիրառման մասին արդեն հաստատվեցին տեսական պատկերացումներ:

➤ Խորհրդային Հայաստանում դիզայնի բուռն զարգացման վրա մեծապես ազդեց նաև հայրենադարձությունը: Դրսից եկածներն ամենն իր տարածքից բերեց այն, ինչը կարող էր զարգացնել Հայաստանում, ինչը կարող էր օգտակար լինել, նպաստել և, իհարկե, ընդունելի լիներ: Պատահական չէ, որ շատ բան նաև չընդունվեց, քանի որ խորթ էր Խորհրդային իրականությանն ու համակարգին:

➤ Ազգային մշակույթի կարևոր բնագավառներից են նաև քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը, որոնք միշտ էլ կապված են եղել տվյալ դարաշրջանի գեղագիտական մտքի զարգացման հետ, ներառելով նաև այդ ժամանակահատվածի դիզայնի տիպությունը: Քաղաքաշինությունը, լինելով տվյալ ժամանակի հասարակության գործունեության միջավայրը, սկզբնավորվել է մարդու շրջապատի նկատմամբ նրա գիտակցական մտածողության ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց, այնուհետև փոխանցվել է սերնդե-սերունդ: Հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի քաղաքաշինական ու ճարտարապետական նվաճումների մասին վկայում են մեզ հասած մեծաքանակ հուշարձանները, ճարտարապետական գլուխգործոցները, պատկերաքանդակները, զարդաքանդակները, որմնանկարները և այլն, որոնք արտացոլում են նաև այդ նույն ժամանակների դիզայնը:

➤ Ստեղծագործող անձնավորության ամենակարևոր հատկանիշներից մեկը առարկան տարբեր կողմերից տեսնելու, ընկալելու, պատկերացնելու և ներկայացնելու կարողությունն է: Դիզայնի մասնագետի, և ընդհանրապես արվեստագետի, կարևորագույն ընդունակություններից են այն բացահայտումները, որոնք անգամ ամենատվորական առարկաների պարագայում, ներկայացվում են նոր ձևով, մեկ այլ տեսանկյունից, երբեմն նաև նոր երևակայական տեսքով: Այս առումով գեղագիտական մտքի զարգացումը, դիզայնի ձևավորման գեղարվեստակիրառական և հասարակական նախադրյալները Հայաստանում 1960-80-ական թվականներին սկսվեցին ոչ միայն կուտակված փորձի ու ճանաչողության փոխանցումից, այլև այդ ժամանակահատվածում ձևավորված աշխարհընկալման գեղագետ վերարտադրության զգայական մոտեցումներից, որոնք էլ հենվեցին նախաձեռնողական մոտեցումների վրա:

➤ Դիզայնի, զարգացումը Հայաստանում 1960-80-ական թվականներ

րին, չդարձավ անցածի սոսկ արտացոլումն ու վերարտադրությունը, այն որպես նորարարություն, ստեղծագործական գործընթաց, իսկ արդյունքում՝ ստեղծագործություն, առավելապես դարձավ տվյալ ժամանակահատվածի գեղագիտության և գեղարվեստական ճաշակի դրսևորումն ու արտահայտությունը:

➤ Կազմելով խորհրդային կերպարվեստի անբաժան մասը, ենթարկվելով դրան ներկայացնող գեղարվեստական և գաղափարական ընդհանուր պահանջներին, խորհրդահայ դիզայներներն իրենց ստեղծագործության մեջ, այնուամենայնիվ, չեն կտրվել ազգային հողից, կարողացել են ոչ միայն պահպանել, այլև խորացնել, առավել շեշտել հայկական կերպարվեստի անկրկնելի, ուրույն գծերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՉԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Եղիազարյան Ա., Մելիքյան Լ.**, Արդյունաբերական դիզայնը գեղարվեստական նախագծման մեջ, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, հ. 1, Երևան, 2013, էջ 126-131:

2. **Մելիքյան Լ.**, 1960-80-ական թվականների հայկական դիզայնի գեղարվեստատեսիսկական բնույթը, Ակունք (ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական հոդվածների ժողովածու), թիվ 3 (9), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 245-249:

3. **Մելիքյան Լ.**, Դիզայնի ձևավորման և զարգացման պատմաժամանակագրական ընթացքը Հայաստանում 1960-80-ական թվականներին, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջան, նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (15-17 նոյեմբերի, 2013), նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014, էջ 239-245:

4. **Մելիքյան Լ.**, Դիզայնի փիլիսոփայությունը, «Կանթեղ», գիտական հոդվածներ, N 1 (58), Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2014, էջ 296-312:

МЕЛИКЯН ЛИЛИТ РАФАЕЛОВНА
ПРЕДПОСЫЛКИ ХУДОЖЕСТВЕННО-ПРИКЛАДНОГО И ОБЩЕСТВЕННОГО
ФОРМИРОВАНИЯ ДИЗАЙНА В АРМЕНИИ В 1960-80-ЫЕ ГОДЫ

Резюме

Предметом исследования диссертации являются художественные, прикладные и общественные предпосылки формирования дизайна в Армении, а также изучение процесса его формирования и развития в 1960-80-ые годы. Предметом исследования также стали исторические периоды и отдельные тенденции развития данной области.

В исследовании представлен подробный анализ понятия дизайна как вид прикладного искусства, а также процессы возникновения и развития теории о нем. Была сделана особая ссылка на основы формирования дизайна, которые с самого начала существования были определены как основные направления художественного подхода, соответствующие потребностям и стандартам данного общества. Формулируя закономерности развития дизайна, были представлены характерные признаки общественной сущности дизайна, необходимость и условия его возникновения, процесс развития, текущее состояние и перспективы развития.

В диссертации были представлены тысячелетние культурные достижения армянского народа, отражающие дизайн отдельных периодов, на основании которых появились художественно-прикладные и общественные предпосылки формирования дизайна в Армении в 1960-80-ые годы. Было также произведено детальное сравнение художественных решений армянского дизайна с основными направлениями и тенденциями развития всемирного дизайна. В работе были представлены сведения об истории дизайна и его отдельных составляющих, начиная с Урартских хроник, ценных дизайнерских описаний и характеристик древнеармянских поселений, крепостей, церквей, работ древнеримских философов и до второй половины 20-го века.

Преследуя основную цель, в рамках диссертации была сделана попытка посредством систематизированного анализа изучить, проанализировать, и дать научную оценку основополагающим принципам, особенностям и основным задачам армянского дизайна 1960-80-ых годов, выявить факторы, способствующие их решению, а также разработать и представить конкретные предложения, направленные на урегулирование и совершенствование этой сферы в настоящее время.

В исследовании была сделана особая ссылка на результаты 30-летней деятельности армянского дизайна, а также на научные и общественные обсуждения данной сферы и художественно-прикладные особенности производимой продукции.

Актуальность темы диссертации состоит в том, что в качестве предмета изучения и исследования была выбрана область, охватывающая еще не изученные и не систематизированные тенденции, подходы и задачи для целесообразного формирования такой сложной среды общественной деятельности в Армении в 1960-80-ых годах.

Теоретическая и практическая значимость диссертации состоит в выявлении исторической, культурной и художественной сущности дизайнера и в представлении его общественному вниманию как одного из самых массовых видов современного прикладного искусства.

Теоретические, искусствоведческие и технические анализы и заключения работы, а также изучение таких сфер дизайна, как его формирование, развитие и практическое использование, могут составить художественный и научно-производственный материал для различных образовательных учреждений.

Теоретической основой для исследования послужили диссертации, научные статьи и анализы, отечественные и иностранные публикации, статьи известных специалистов по изучаемой теме. В ходе исследования были использованы результаты научных конференций, материалы выставок и показов, отчеты, телепрограммы, архивные материалы и т. д. Было также изучено большое количество архивных материалов из Национального Архива РА, фундаментальной библиотеки Национальной Академии Наук РА, библиотек Института Искусства АН и педагогического университета им. Х. Абовяна, Национальной Библиотеки и ряда других библиотек.

С целью решения поставленных исторически познавательных и прикладных задач, в ходе исследования автором были применены самые различные методы, включая диалектический, сравнительный, аналитический, статистический и т. д. Комбинированное использование упомянутых методов в работе дало возможность выявить характерные особенности понятия дизайнера и его развития.

Подводя итоги результатов исследований и анализов, сделанных в рамках диссертации по основным выдвинутым вопросам, а также в результате критического анализа изученного научного материала, автор пришел к ряду заключений, основные из которых кратко представлены в работе.

Структура работы была построена с учетом целей и задач изучаемой темы, а также с учетом изучаемой области и предмета диссертации.

Диссертация состоит из введения, пяти глав (4-ая глава состоит из 9 подзаголовков), заключения и библиографии, которая состоит из 192 наименований, включая монографии, научные статьи, журналы, диссертации, архивные материалы и т.д. Вместе с библиографией и списком использованных источников работа составила 132 стр.

MELIKYAN LILIT RAFAYEL

PREREQUISITES FOR ARTISTIC-APPLICATION AND SOCIAL FORMATION OF DESIGN IN ARMENIA IN THE 1960-80s

Summary

The subject of the thesis investigation is the study of the artistic, social and application prerequisites for design formation in Armenia and the process of its development in the 1960-80s. From the artistic and scientific-technical standpoints, the historical periods and some specific trends of the field development have also become the subject of the investigation.

The investigation thoroughly dwells upon the notion of design as a kind of applied art, as well as gives the analysis of the origin and development processes of the theory about it. A special reference has been made to the bases of design formation, which were put forward at the very beginning of its existence as the main directions of artistic approach corresponding to the needs and standards of the given society. Formulating the regularities of design development, the thesis gives the definition of the social essence of design, the necessity and conditions of its emergence, the course of development, the current state and prospects for the future development.

There have also been presented the cultural achievements of the Armenian people over millennia reflecting the design of certain periods, which served as a basis for the presentation of the artistic, social and application prerequisites of design formation in Armenia in the 1960-1980s. The artistic solutions of the Armenian design have been scrupulously compared with the main directions and development trends of the world design. The work also gives information about the history of design and its specific elements – from ancient Urartu records, the valuable descriptions and design characteristics of ancient Armenian settlements, fortresses and churches, works by the philosophers of Ancient Greece and up to the second half of the 20th century.

Having in view the main object of the research, through a systematic analysis an attempt has been made to study, analyze, evaluate and give a scientific assessment to the fundamental principles, peculiarities and main issues of the Armenian design of the 1960-80s and identify the factors contributing to their solution, as well as to work out and make specific proposals directed to the regulation and improvement of that sphere today.

A special reference has been made to the results of the 30-year activity of the Armenian design, the scientific and public discussions of that sphere, exhibitions, the artistic and application peculiarities of the produced output.

The topicality of the thesis subject consists in the choice of such a sphere for study and research, which involves the trends, approaches and issues related to the

expedient setting of the complex environment of the social activity in Armenia in the 1960-80s and which were not studied, analyzed and systematized before.

The theoretical, as well as practical significance of the thesis consists in revealing the historic-cultural and artistic essence of design and make it a focus of public attention as a mass form of modern applied art.

The theoretical, scientific and technical analyses and conclusions of the work, as well as the studies of the formation, development and application spheres of design, may serve as an artistic and scientific-production material for educational institutions.

The theoretical assumptions of the research are based on the relevant theses, scientific articles and analyses, Armenian and foreign publications, articles by renowned specialists. In the course of the study a great number of relevant materials have been used, such as conference findings, exhibition stuff, reports, TV programmes, archive records, etc. The studied archive records included materials from RA National Archive and the fundamental library of RA National Academy of Sciences, the libraries of the Art Institute of NAS and the State Pedagogical University after Kh. Abovyan, the National Library and a number of other libraries.

In order to fulfill the historic-cognitive and application tasks set in the research, the author has applied a number of various methods, including dialectical, comparative, analytical, statistic, etc. The combined application of the above-mentioned methods in the work has enabled to reveal the whole essence and development peculiarities of design.

Summarizing the discussed issues and the results of the studies, investigations and analyses, as well as proceeding from the main purposes and tasks of the research and the results of the critical analysis of the studied material, the author has arrived at a number of conclusions, the most important of which are briefly stated in the work.

The structure of the thesis is formed taking into consideration the purposes and tasks of the research, as well as the sphere and subject of the thesis study.

The thesis consists of an introduction, five chapters (the 4th chapter including 9 subtitles), a conclusion and a bibliography, composed of 192 entries, including monographs, scientific publications, journals, theses, archive materials, etc. The work, along with the bibliography and the list of sources, has made up 132 pages.